



# GEORGE GASCÓN

## LOS ANGELES COUNTY DISTRICT ATTORNEY



2020 թվականի դեկտեմբերի 7-ին Ջորջ Գասկոնը երդում տվեց որպես Լոս Անջելեսի 43-րդ շրջանի դատախազ՝ քրեականարդարադատության բարեփոխումների իր տեսլական մոտեցումը տրամադրելով երկրի ամենամեծ տեղական դատախազությանը:

Գասկոնը Բիլ Բրատտի օրոք Լոս Անջելեսի ոստիկանության բաժանմունքում բարձրացավ պարեկային սպայից մինչև ոստիկանապետի օգնական, որից հետո ծառայեց որպես ոստիկանապետ Արիզոնա նահանգի Մեսա քաղաքում: Ապա՝ Սան Ֆրանցիսկոյի ոստիկանապետ նշանակվեց այն ժամանակվա քաղաքապետ Գավին Նյուսոմի կողմից:

Կալիֆոռնիայի գլխավոր դատախազ Կամալա Չարիսի ընտրությունների արդյունքում ստեղծված շրջանային դատախազի թափուր տեղի համար 2011 թվին Գավին Նյուսոմն առաջարկեց Ջորջ Գասկոնի թեկնածությունը: Այսպիսով Կուբայում ծնված փաստաբանը դարձավ առաջին լատինական ծագում ունեցող ոստիկանապետը, ինչպես նաև երկրի առաջին ոստիկանապետը, որ դարձավ շրջանային դատախազ:

Իր պաշտոնավարման երկու ժամկետների ընթացքում Ջորջ Գասկոնը Սան Ֆրանցիսկոյի բանտարկյալների թիվը կրճատեց գրեթե 30 %-ով և բռնության հանցագործությունները հասցրեց պատմական ցածր մակարդակի: Նա երկրի առաջին շրջանային դատախազն էր, ով կոչ արեց դադարեցնել կանխիկ գրավը և օրինականացումից հետո առաջինը գործարկել մարիխուանայի դատապարտվածների ռեկորդների ավտոմատ մաքրման ծրագիրը:



# GEORGE GASCÓN

## LOS ANGELES COUNTY DISTRICT ATTORNEY

Ջորջ Գասկոնը ստեղծեց Կալիֆորնիայի առաջին անկախ հետաքննության բյուրոն թափանցիկությունը բարձրացնելու և շահերի բախումը սահմանափակելու համար, որը տեղի է ունենում, երբ ոստիկանությունն ինքնահետաքննություն է իրականացնում: Նա նահանգի միակ շրջանային դատախազն էր, ով աջակցեց ոստիկանական ուժի կիրառման համար ստեղծել օրենքի ավելի խիստ չափանիշներ:

Ջորջ Գասկոնն ստացել է պատմության արվեստի բակալավր Լոնգ Բիչի Կալիֆորնիայի պետական համալսարանում(California State University of Long Beach) և իրավաբանական գիտությունների դոկտորի աստիճան՝ Արևմտյան պետական համալսարանի իրավագիտության քոլեջում(Western State University, College of Law):

Նա ամուսնացած է <<Էմմի>> մրցանակի եռակի դափնեկիր՝ լրագրող Ֆաբիոլա Կրամսկիի հետ: